ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 07 մարտի 2019 թվական

Արձանագրություն N 5

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

Նախագահ՝ Տիգրան Խաչատրյան

Քարտուղար՝ Սուրեն Պետրոսյան

Ներկա էին խորհրդի 9 անդամներից 7-ը:

Բացակայում էին՝ Արտակ Ասատրյան, Մելիտա Հակոբյան:

Հրավիրվածներ՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Արթուր Մկրտչյան և ՀՀ վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ Տարոն Հակոբյան:

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին զեկույց:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյան

2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելուն հավանություն տալ:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյան

3. Ծրագրի գնումների պլանին հավանություն տալ:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյան

4. Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելուն հավանություն տալ:

   Զեկուցող՝ Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյյան

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել օրակարգը:

կողմ 7

դեմ 0

1. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանը հայտնեց, որ օրակարգի 1-ին և 4-րդ հարցերը կապված են միմյանց հետ և առաջարկեց առաջին հարցին անդրադառնալ 4-րդ հարցի շրջանակներում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հարցին անդրադառնալ 4-րդ հարցի շրջանակներում:

կողմ 7

դեմ 0

2. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկույցը՝ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Ա.Կոտոյանը հայտնեց, որ փոփոխությունը տեխնիկական է, համաձայնեցված է ֆինանսների նախարարության հետ, բյուջեի չափը փոփոխության չի ենթարկվում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը, առաջարկեց հավանության տալ հարցին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջեում փոփոխություններ և լրացումներ կատարելը:

կողմ 7

դեմ 0

3. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկույցը՝ ծրագրի գնումների պլանին հավանություն տալու վերաբերյալ: Արմեն Կոտոյանը ներկայացրեց ծրագրի գնումների պլանը: Նշեց, որ պլանը համաձայնեցվել է ֆինանսների նախարարության հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը, խորհրդի անդամներ Հայկ Այվազյանը, Կարեն Միրզաբեկյանը, հրավիրված Արթուր Մկրտչյանը: Տ.Խաչատրյանը նշեց, որ անհրաժեշտ է նախագիծ ներկայացնել օգտագործումից հետո ապրանքների հետագա ընթացքի վերաբերյալ, իսկ մինչ այդ նպատակահարմար չէ գնումներ կատարելը: Հ.Այվազյանը առաջարկեց ոլորտի խնդիրները վերհանելու նպատակով ուսումնասիրվի առանց տուգանելու: Ա.Մկրտչյանը նշեց, որ գնումները կատարվելու են ընթացակարգերի հստակեցումից հետո: Կ.Միրզաբեկյանը նշեց, որ ավելի արդյունավետ կլինի գնել

բենզինի լաբորատոր փորձարկման սարքավորումներ: Հ.Այվազյանն առաջարկեց հավանություն տալ՝ հետագայում կոնկրետացնելով ընթացակարգերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ ծրագրի գնումների պլանին:

կողմ 7

դեմ 0

4. **ԼՍԵՑԻՆ** - Արմեն Կոտոյանի զեկուցումը՝ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Խորհրդի նախագահ Տիգրան Խաչատրյանը, խորհրդի անդամ Հայկ Այվազյանը, հրավիրված Արթուր Մկրտչյանը: Ա.Մկրտչյանը նշեց, որ այդպես ներկայացվել է խոշոր և մանր ձեռնարկություններին նույն չափով չտուգանելու համար: Տ.Խաչատրյանը նշեց, որ անհրաժեշտ է նոր առաջարկություններ ներկայացնել, հստակ տարանջատել խախտումները, որպեսզի տարբերությունը հնարավորինս փոքր լինի, չափերը քննարկել խորհրդի անդամների հետ նաև առանց խորհրդի նիստի: Հ.Այվազյանը առաջարկեց հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքով նախատեսված՝ չափագիտական վերահսկողություն իրականացնելիս տնտեսվարող սուբյեկտին 3 աշխատանքային օր առաջ հայտնելու պահանջը հանելուն, իսկ տուգանքների չափերը փոխելու վերաբերյալ հավանություն տալ ընդհանուր կոնցեպտին, իսկ չափերի վերաբերյալ ներկայացել նոր առաջարկություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու նախագծին, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու ընդհանուր կոնցեպտին հավանություն տալ՝ սպասելով տուգանքների ավելի համաչափ չափերով առաջարկություններին:

կողմ 7

դեմ 0

Խորհրդի նախագահ՝ _____ Տիգրան Խաչատրյան

Խորհրդի անդամներ՝ _____ ~~Հայկ~~ Այվազյան

_____ Ալբերտ Բաբայան

_____ Արմեն Հայրապետյան

_____ Աբգար Մկրտչյան

_____ Կարեն Միրզաբեկյան

_____ Կարեն Սահակյան

Քարտուղար՝ _____ Սուրեն Պետրոսյան